ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆ N 157-Ա

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ,, ԵՎ ,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ,,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով

որոշում եմ

1.,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի երաժշտական դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման ճանապարհով ստեղծել ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի երաժշտական դպրոց,, ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, որոնց նպատակն է Բերդ քաղաքում երեխաների գեղագիտական դաստիարակության և մշակութային գործունեության իրականացումը:

2.,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի երաժշտական դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը և գործունեության տեսակները թողնել անփոփոխ:

3. Սահմանել, որ ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնելու է գործունեության հետևյալ տեսակները.

-երեխաների գեղագիտական դաստիարակություն

- կերպարվեստի ուսուցում

-դեկորատիվ կիրառական արվեստի ուսուցում

4.,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնելու է քաղաք Բերդ, Լևոն Բեկի 2 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկում:

5.Հաստատել ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմն ու արժեքը՝ համաձայն հավելվածի:

6.,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Հայկ Մերուժանի Բաղալյանին /անձնագիր՝ AG 0376160 տրված 25.01.2005 թ. 056, բնակության վայրը՝ Տավուշի մարզ, ք. Բերդ, Թեիլերյան 8/:

7.Հանձնարարել ,,Տավուշի մարզի Բերդ քաղաքի արվեստի դպրոց,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

- մշակել կազմակերպության կանոնադրությունը և այն ներկայացնել քաղաքապետին.
- սույն որոշման համաձայն ստեղծվող համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի քաղաքային համայնքի ավագանու կողմից հաստատումից հետո՝ մեկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Տավուշի տարածքային բաժին՝ նորաստեղծ կազմակերպության պետական գրանցում կատարելու խնդրանքով:
- կազմակերպության պետական գրանցումից հետո կատարել կազմակերպչական աշխատանքներ բանկային հաշվի ձևակերպման, կնիքի ու անկյունային դրոշմակնիքի, ինչպես նաև բլանկների և իրավաբանական անձին անհրաժեշտ այլ ատրիբուտների պատրաստման ուղղությամբ:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան